ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ապրիլի 2026թ. թիվ 259-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 5 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշմամբ, հաշվի առնելով նույն որոշման հիման վրա համակարգչում նախօրոք զետեղված ու համակարգչի կողմից պատահական ընտրված 4 թեկնածուների ցուցակը և ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի 17.04.2026թ. թիվ ՎԳ/05/12945-2026 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության՝ հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 22.04.2026թ. ժամը 11:00-ին մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հանձնաժողովի անդամներից հանձնաժողովի նախագահ նշանակել Մերի Դալլաքյանին, հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Ադամյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-04-21 10:58:58 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. ապրիլի 21
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2026թ. ապրիլի 21-ի
թիվ 259-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի

ԿԱԶՄ

Մերի Դալլաքյան	- ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Ռուզաննա Պողոսյան	- ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ
Կարինե Ադամյան	- ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Արուս Թումանյան	- ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
Մեսրոպ Հազրոյան	- «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն
Վարդուհի Սիսակյան	- «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրեն
Անժիկ Հովհաննիսյան	- ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Լոռի» մասնաճյուղի տնօրեն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Invalid signature

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ